

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 5 Յուն. — Կէսօրէ կտք ժամը 2.30-ին, Մայրավանքի մեծ դանդը գուարթի գանգիւններով կը ծանուցանէր սկզբնաւորութիւնը Ս. Ծնունդը — կամ Ծննդեան պահը — կանխող Աւագ Տօներուն: Ուրիշ կտք, չքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ ընթացք կ'առնէ անոնցմէ առաջինին՝ Դաւթի մարգարէի և Յակոբայ Տեառնեղբոր մեծանանդէս նախատեսակը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. Ասլա, Թորնեցէք ՂՏէր: Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Շր. 6 Յուն. — Ս. Դաւթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Պատրիարք Զայրը, շուրջառ և եմփօրոն առնելով, բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին ուր, ժամերգութեան աւարտին, ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւնները: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, որ իր քաւով ընթացքին բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Ամենապատուութեան բարձր կեանքի և արեւշատութեան համար: Ամեն. Ս. Պատրիարք Զայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանդուցեալ պատրիարքաց հոգեւորական համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

● Կիր. 7 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ: Ժամարարն էր Զոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտէրեան: Ս. Թարգմանչաց Երկ. վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Ամեն. Ս. Պատրիարք Զայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի հանդիսաւոր նախատեսակին:

● Բշ. 8 Յուն. — Ս. Սեփանոսի ճախովկային: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Աթոռոյս 3 Սարկաւագներն ու 4 Ուրարակիրները, մարգարտաղարդ սաղաւարտ ի գլուխ և տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մատաւաւրին: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Զայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան — Ս. Ստեփանոս մատրան — աւագ սեղանին վրայ: Ժամարարն էր Զոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան: Տօնին բուրվառակիր Զայրերն էին Տ. Ասլա և Տ. Մանուէլ Արեղաներ:

— Գլխաւոր Առաքելոյ՝ Պետրոսի և Պօղոսի հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Գշ. 9 Յուն. — Ս. Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի: Ս. Պետրոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Զոգշ. Տ. Բարսեղ Արղ. Անուշեան:

● Գշ. 10 Յուն. — Աւագ Տօներուն վերջինին — և փառաւորագոյնին — մեծանանդէս նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. Ասլա Ս. Աթոռոյ շարականի երգելով Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Եշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդոյն Ռոսման, Յակոբայ առաքելոյն և Յովնանու աւետարանին — Բարեկեցեաց Ս. Ծննդեան պահը: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատոյց Ամեն. Սրբ. Պատրիարք Զայրը և ապա, ամպշովանի թակ և կենաց Փայտի մատունքն ի ձեռին, նախագահեց երազարձ մեծանանդէս թափօրին: Արարողութեանց աւարտին, նախորդ օրուան նման, շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց ժողովուրդին և փակեց շարքը Աւագ Տօներուն:

● Շր. 13 Յուն. — Ս. Բարդի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Զոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Կիր. 14 Յուն. — Նոր Տաքի, Կաղանդ քս Հին Տոմարի: Կէս գիշերին, Մայրավանքի մեծ դանդը, ճայնակեցելով Ս. Յարութեան Տաճարի Տօնաց զանգերուն, ուրախ զօղանջներով կ'աւետէր ժամանումը Նոր Տարուան:

— Առաւօտուն, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, ժամօրհնողը՝ Զոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Յետոյ, Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Ս. Թարգմանչաց Մանկապարտեղէն ներկու փոքրիկներ զողորմիկ ուղերձներով և ծաղկեփունջի մատուցմամբ վարժարանի ուսանողութեան Ամանորեան շնորհաւորութիւնները ներկայացուցին Ամեն. Ս. Պատրիարք Զօր, որ տօնը շնորհաւորելէ կտք բաժնեց ժողովուրդին մէկական նարինջ:

● Եշ. 18 Յուն. — Ճրգալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 10ին, պայծառ երկնքի մը և գաղշ արեւի մը հառապայթնեւուն ներքեւ, Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր և ինքնաշարժերու երկար շարանով մը համարայ ելաւ դէպի Բեթղեմէմ: Կէս համրան, Յունաց Ս. Եղիա վանքի մօտ պատուաւիրուելէ և Բեթղեմէմի և չրիակայ գիւղերու Մոխթարներուն կողմէ դիմաւորուելէ

ետք, հեծեալ ոստիկաններու ալ առաջնորդութեամբ, պատկառելի թափօրը շարունակեց իր ճամբան և ժամը 11ին հասաւ Ս. Ծննդեան հետեւ հրապարակը, ուր կը տողանցէին Հայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղադարդ ու հեկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուազախումբը կը նուազէր Ծննդեան մեղեդիները։ Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորութեամբ բեթզեհէմի Բաղաքապետին և Զին. Կառավարչին կողմէ։ Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեւոր՝ Տ. Հայկասեւր վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը խորհուրդ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք։ Օտար հիւրերը պատուասիրութեան Տաճարի մեր Տեսչարանին մէջ։

— Կէսօրէ ետք, Դեբը. Տ. Կիւրեղ Եպիսկ. Գարեկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շրջապատուելով մուտք գործեց Սուրբ Ծննդեան Տաճար։ Ս. Այրի ուխտէն ետք, Տաճարի հայկական բաժնին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և ճրագալոյցի արարողութիւն։ Իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ։ Ժամարարն էր Հոգչ. Տ. Նուրնան վրդ. Մանուկեան։ Ս. Ծննդեան նախատօնակէն ետք, խորհուրդ մեծի երգեցողութեամբ անցնելով սրահադարձ գաւթէն, Միաբանութիւնը բարձրացաւ մեր վանքը և նստաւ բնթրքի։

— Ինչերուան ժամը 10:30ին սկիզբ առին գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները Տաճարի հայկական բաժնին մէջ։

● Ուր. 19 Յուն. — Ծննդեան և ԱՍՏՈՒԱԾԱՅԱՏՏՈՒԹԻՒՆ։ Կէս գիշերին, խորհրդաւոր դանդաճութենէ մը ետք, ամբողջ Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այրը, ուր կատարուած արարողութիւնը, մօտ մէկ ժամ, ձայնասփռութեամբ իւրայելեան ռատիօկայանէն Այս առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը տուաւ իր պատգամը, որ կ'երևի Սիոնի ներկայ թիւին մէջ։ Ներկայ էին Երուսաղէմի Բաղաքապետ վսեմ. Թէտի Բօլէք, բեթզեհէմի Բաղաքապետ վսեմ. Էլիաս Տրէյճ և Զինուորական Կառավարիչը, որոնք ապա իրենց շնորհաւորութիւնը յայտնեցին Ն. Ամենապատուութեան և մեկնեցան։ Սրբազան Պատրիարքն ալ վերադարձաւ Երուսաղէմ։ Իսկ Զնացեալ հանդիսութեանց նախագահեց Դեբը. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս որ, Տաճարի մեր բաժնին մէջ, Հոգչ. Տ. Անուշաւան վրդ. Զղիանեանէ մատուցուած Ս. Պատարագէն և Ջրօրհնեաց արարողութենէն ետք, առաւօտեան դէմ մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Ս. Ծննդեան Այրին մէջ։ Ապա, երէկուան կարգով, Միաբանութիւնը բարձրացաւ մեր վանք՝ նախաճաշի։

— Կարճ հանդիստէ մը ետք, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ, ուր հասաւ

ժամը 8ին և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Ծննդեան աւետիսով օրհնեց ու արձակեց ամէնքը։

— Երուսաղէմի մէջ, ճրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Դերեղմանին զիմաց։ Իսկ Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Դերեղմանին վրայ մատուց Հոգչ. Տ. Բարդէն Արդ. Անուշաւան։ Տաճարի Տեսուչ Հոգչ. Տ. Վաղարշ վարդապետ նախագահեց նախատօնակին։

— Ուրբաթ առաւօտ կանուխ Մայր Տաճարին մէջ պաշտուած ժամերգութեան աւարտին, Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց, ըստ սովորութեան, Ս. Հրէշտակապետաց վանուց Տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան վրդ. Դարիպեան, որ ապա նախագահեց Ջրօրհնէքի սրբատաղրաւ արարողութեան։

— Ի բացակայութեան ժառանգ. սաներու, թէ՛ երէկ և թէ՛ այսօր երգեցողութիւնները կատարուեցան տեղացի գպիւրներու կողմէ։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Դեբը. Տ. Կիւրեղ Եպիսկ. Գարեկեան։

● Եր. 20 Յուն. — Յիւստակ մեկոյց։ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուց, ըստ սովորութեան, Աւագ Թարգմանը՝ Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան։ Հանգրստեան պաշտամունքին նախագահեց Լուսարարապետ Դեբը. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասլանեան։

● Կիր. 21 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատարն մէջ։ Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան։

● Ել. 25 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Դեբը. Տ. Տիրայր Եպիսկոպոս։

● Ուր. 26 Յուն. — Անուանակոչութիւն Տեառն։ Առաւօտեան ժամը 8:30ին, Դեբը. Տ. Տիրայր Եպիսկ. Մարտիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շրջապատուելով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Դեբը. Հանդիսապետ Սրբազանը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Դերեղմանին վրայ և կուռ քարոզով մը յորդորեց Սաղիմայեքը զինուելու առողջ գիտակցութեամբ մեր ազգային արժէքներուն և ըլլալու հաւատարիմ աւանդապահ անունը։ Վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն, լոյս ի լուսոյ՝ տօնի շարականին երգեցողութեամբ, Միաբանութիւնը յառաջացաւ դէպի Մայրալմանք և բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ Տնօրհնէքի արարողութիւն։ Ս. Աթոռոյս բարիքներու օրհնութեան աւարտին, վերուցս սեղանատան և խոհանոցին մէջ ևս զինուեցաւ նոյն արարողութիւնը, ժամօրհնող Հոգչ. Տ. Ռուբէն վրդ. Յովակիմեանի գլխաւորութեամբ։ Օրհնութեամբ նաև հեթսան՝ աւանդական հաշը տօնին։

— Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եր. 27 Յուն. — Ինքնուր Յովնանու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

● Կիր. 28 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալաթեան:

● Եր. 3 Փետր. — Ս. հայրապետացն Արամասի եւ Կիրղի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Դարիպեան:

● Կիր. 4 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալաթեան:

● Եր. 10 Փետր. — Ս. Գրիգորի Ասուածարանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան:

● Կիր. 11 Փետր. — Բարեկենդան Առաջանորի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Ուր. 16 Փետր. — Յիւստակ Յովնանու մարգարէին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ Հոգշ. Տ. Ասպետ Արեղայ կատարեց ընթերցումը Յովնանու Գրքին:

— Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Եր. 17 Փետր. — Ս. Սարգսի զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գանձատան նախագահի թը եղող Ս. Սարգսի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ապա, ընկալեալ սովորութեան համաձայն, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ աղգային մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգսի հոգեոյն համար, անոր անուան տօնին առթիւ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Կիր. 18 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովնիսեան:

● Եր. 24 Փետր. — Ս. Իսահակայ Կարբէի հայրապետին: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց Հոգշ. Տ. Համարձում Արեղայ Բէշլիշեան:

● Կիր. 25 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, վարժիչ — ուսուցիչը նորընձային՝ որ կը սպասարկէր Ս. Խորհուրդին:

● Բշ. 26 Փետր. — Տեառնըդառաջի մեծանշան նախատեսակին և անոր յաջորդող առաջին մեղակոստանին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև գիւղերատկերին Մայր Տաճարին մէջ պաշտուած եկեղեցեցի և Հսկման կարգերուն, որմէ ետք, ժառ. սաներ նախկին վարժարանի դաշտին վրայ վառեցին աւանդական կրակը: Խուռեւրամ ժողովուրդը մոտեցած էր դաշտ, ձմեռնաւիերջի տաքուկ օդով ու անամպ երկնքի մը տակ գիտեալ հեթանոսական վերջամնաց սովորութիւններէն եղող Խաբոյկահանդէսը:

● Գշ. 27 Փետր. — Տեառնըդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

● Դշ. 28 Փետր. — Վարդանանց մեծանշան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Բշ. 8 Յուն. — Օրթոտքս Եկեղեցւոյ Ս. Իննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարքը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին, որմէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Հապէշաց և Ասորւոց Եպիսկոպոսներուն և Ռուսաց վանքի Մեծաւորին:

● Ուր. 12 Յուն. — Բեթլեհէմի Զինուորական Կառավարիչը այցելեց Ս. Պատրիարք Հօր:

● Եր. 13 Յուն. — Դիւերուան ժամը 7ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ալէքս և Մարի Մանուկեան ժառանգ. Վարժարանի Ամանորի Հանդէսին, որ առաջին անգամ ըլլալով կայացաւ նորակառոյց վարժարանի ընդարձակ սրահին մէջ:

● Բշ. 15 Յուն. — Կէսօրէ ետք, Ս. Էջմիածին մատարան մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Կաղանդի առաւօտեան վախճանած Պատրիարքարանի պահակ — բարապան Հայկ Մկրտիչեանի յուղարկաւորութեան:

● Եր. 20 Յուն. — Մեր Ս. Իննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Պատրիարքարան յաջորդարար շնորհաւորական այցելութեան եկան — Յունաց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Ամեն. Տ. Բենեդիկտոս Պատրիարքին, Լատինաց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Սօն. Տ. Գլէթրիթի Պատրիարքին, Զրաշխականք՝ գլխաւորութեամբ Գերշ. Կիւսմետին, Պապական Նուիրակը, Անկիլիբան Արքեպիսկոպոսը, Ասորւոց և Հապէշաց Եպիսկոպոսները՝ իրենց Միաբանութեան անդամներով, Յոյն և Հայ Հոռովմէական և Մարոնիթ համայնքի Մեծաւորները՝ իրենց օգնականներով, Ռուսաց Միաբանութեան Մեծաւորը, Ռուսէն Եկեղեց-

ւոյ ներկայացուցիչը և Լուտերականներու փրօփաթն ու Արար-Լուտերականներու երէցը:

● Կիր. 21 Յուն. — Նոյն առթիւ շնորհաւորութեան եկան՝ Քաղաքապետ վաճմ. Թէտի Քօլլէք՝ Քաղաքապետարանի երկրաչափ Պր. ձարալլահի հետ, Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչն ու Ոստիկանապետը, ինչպէս նաև «ձերմակ Ռուսերու» վանքին Մեծաւորը:

● Բշ. 22 Յուն. — Նոյն առթիւ շնորհաւորութեան եկան օտար տէրութեանց Հիւպատոսները:

— Կէսօրը քիչ անց, օրերս Իսրայէլ այցելող Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախկին Նախագահ Պր. ձէրալտ Ֆօրտ, իր ազնուափայլ տիկնոջ հետ, այցելեց Ս. Աթոռ: Վանքի զրանդիմաւորութեամբ Միարնութեան կողմէ, մինչ վարժարանի աշակերտութիւնը, ատենէ մը ի վեր սաստիկ ցուրտին հակառակ հոն սպասող, ջերմ ծափահարութեամբ եկեղեցւոյ գաւթին մէջ ողջունեց մեծայարգ հիւրերը, որոնք յետոյ առաջնորդուեցան Մայր Տաճար, ուր ընդունուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ և Ս. Գլխադրի վրայ իրենց ուխտը ընելէ ետք լաւ տպաւորութիւններով մեկնեցան:

● Շր. 17 Փետր. — Երեկոյեան, Սկոլտական St. Andrew's Եկեղեցւոյ մէջ, Եկեղեցւոյ երէց Թօմ Հուսթօնի հրաւերին ընդառաջելով, Գերշ. Տ. Կիրեղ Եպս., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Արդ. և Տիար Գէորգ Հինգլեան ներկայ եղան Ս. Քաղաք այցելող վեր. Պրօտիի ի պատիւ տրուած ընդունելութեան:

● Կիր. 18 Փետր. — Ընդառաջելով Մարոնիթ համայնքի Մեծաւոր Մօնս. Օկոսթին Հարփուշի հրաւերին, Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Մարոնիթներու Եկեղեցւոյ մէջ, 9 Փետրուարին զուգարկապաժ Ս. Մարոնի տօնին առթիւ յիշեալին մատուցած Ս. Պատարագին և եկեղեցւոյ կից քրահին մէջ տրուած ընդունելութեան:

Մենդեան Ութօրէքին Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագելէ և քարոզելէ զատ, կատարեց նաև քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը Հրաշ Սարկաւազին, այդ առթիւ խօսած յորդորական իր քարոզին մէջ յայտնելով թէ իր Ս. Աթոռոյս հացը կերած ըլլալուն (Սրբազանը, ծնած Պէյրութ, 1910ական թուականներուն աշակերտած է Ս. Աթոռոյս Ժառնգ. վարժարանին և ապա ներգաղթած Հայրենիք) պարտքն է որ մասամբ մը հատուցած եղաւ իր կատարած ձեռնադրութեամբ:

3 Փետրուար, Շարաթ գիշեր, Սրբազանը խիստ շահեկան ու հետաքրքրական բանախօսութիւն մը տուաւ Ռուսահայ ու Պուլկարահայ գաղութներու անցեալին ու ներկային մասին, Հ. Ե. Միութեան ակումբին մէջ:

Գերշ. Սրբազանը 14 Փետրուարին, Զորեք-չարթի օր, Իսթանպուլի ճամբով վերադարձաւ իր պաշտօնատեղին, ականատես ըլլալէ ետք Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարքով գլխաւորուած Ս. Յակոբեանց Միարնութեան արձանագրած նուաճումներուն՝ կրօնական ու կրթական գետններու վրայ:

Հ Ի Ռ Ե Ր ՝ Հ Ա Յ Ր Ն Ն Ի Ք Է Ն

22 Յունուար, Երկուշաբթի օր, ընդառաջելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաւերին, Հայաստանէն Ս. Աթոռ Ժամանեցին Մայր Աթոռոյ պաշտօնաթիւթ լէյմիածին Ամասգրի Խմբագիր Տիար Արթուր Հատրիտեանը և Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններու Քարտուղար Տիար Պարգե Շահպազեանը, երկուքն ալ դասախօսներ Հոգևոր ձեմարանի:

Յարգարժան հիւրերը Երուսաղէմ մնացին մինչև 11 Մարտ, մօտէն հսկելով Ս. Աթոռոյ Տպարանին մէջ նոր, էլէքթրօնիկ մեքենայով կատարուած Աստուածաշունչի տրեմտահայ թարգմանութեան տպագրութեան: Թարգմանութիւն մը՝ զոր տարիներու տքնաջան աշխատանքով գլուխ հանած էին, նմանապէս Հոգևոր ձեմարանի դասախօս Տիար Սամուէլ Անթոնեանի հետ, վերին հսկողութեամբ Ազգիս սիրեցեալ վեհ. Հայրապետին:

16 Փետր., Ուրբաթ գիշեր՝ Պր. Հատրտեան իսկ 6 Մարտ, Գշ. գիշեր՝ Պր. Շահպազեան բանախօսեցին Հայ Երիտ. Միութեան սրահին մէջ Առաջինը խօսեցաւ իրենց աշխատանքին ու առաքելութեան շուրջ, իսկ երկրորդը՝ Հայաստանի Երիտասարդութեան մասին:

Գ Ե Ր Ը. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՄԱՐՏԻԿԱՆԱՆ ՄԵՐ ՄԷՋ

12 Յունուար, Ուրբաթ օր, Պուլքէշէն Ս. Քաղաք Ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միարան և Ռուսահայ ու Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեանը, Ս. Մենդեան տօնը մեր մէջ անցընելու համար, հրաւերովը Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Գերշ. Սրբազանը Ս. Աթոռ մնաց աւելի քան ամիս մը, և եկեղեցական հանգիստութեանց իր մասնակցութիւնը բերելէ և Սուրբ

